

## ՀՀ Ֆինանսների նախարարություն

### Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 33/2

25 օգոստոսի 2015 թ.

Քննարկվեց «Ալվարդ Վարդանյան» ՍՊԸ 30.07.2015 թ-ի վարչական բողոքը ՀՀ ՖՆ Նոր Նորքի ՀՏ 29.07.2015թ.-ի հարկ վճարողի գույքի վրա արգելանք դնելու վերաբերյալ թիվ 030724 որոշման դեմ:

#### **«Ալվարդ Վարդանյան» ՍՊԸ բողոքում բերված փաստարկները.**

ՀՀ Ֆինանսների նախարարության Նոր Նորքի հարկային տեսչության կողմից «Ալվարդ Վարդանյան» ՍՊԸ-ում կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում, որի արդյունքում 16.07.2015թ. կազմվել է թիվ 5011722 ակտը (հետագա տեքստում՝ Ակտ): Ակտի 3-րդ կետով առաջադրվել է վճարման լրացուցիչ հարկային պարտավորություն ավելացված արժեքի հարկի գծով՝ 20.166.235 դրամի չափով: Ակտը «Ալվարդ Վարդանյան» ՍՊԸ-ին հանձնվել է 21.07.2015թ.-ին, հետևապես այն ուժի մեջ է մտնում հանձնման օրվան հաջորդող օրվանից՝ 22.07.2015թ.-ից:

Համաձայն «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի. «Հարկ վճարողները թաքցված կամ պակաս ցույց տված հարկվող օբյեկտի համար հարկի գումարը, ինչպես նաև սույն օրենքի 13.13-րդ հոդվածի 1-ին մասի, 23-27, 28.5 և 31 հոդվածների համաձայն հաշվարկված հարկային պարտավորությունները և սույն օրենքի 26-րդ հոդվածի երրորդ պարբերությամբ սահմանված վնասի հատուցման գումարները բյուջե են վճարվում հարկային մարմնի կողմից համապատասխան ակտ ներկայացնելուց հետո՝ 10-օրյա ժամկետում ... »:

Այս իրավանորմի վերլուծությամբ ակնհայտ է, որ Ընկերության գումարը վճարելու օրենսդրական պարտավորության վերջնաժամկետն էր 03.08.2015թ. (նախորդ օրը ոչ աշխատանքային է): Մինչդեռ, ՀՀ ՖՆ Նոր Նորք ՀՏ-ն, չսպասելով օրենքով սահմանված ժամկետի լրանալուն, հետևաբար, խախտելով վերը հիշատակված իրավանորմերի իմպերատիվ պահանջները, 27.07.2015թ.-ին կայացրել է «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» թիվ 523 որոշումը՝ 19395281 դրամ բռնագանձելու վերաբերյալ, իսկ 29.07.2015թ. կայացրել է «Հարկ վճարողի գույքի (այդ թվում՝ դրամական միջոցների և բանկային հաշիվների) վրա արգելանք դնելու վերաբերյալ որոշում, համաձայն որի արգելանք է դրվել «Ալվարդ Վարդանյան» ՍՊԸ-ին պատկանող շարժական և անշարժ գույքի, դրամարկղային գրքի, «Պրո-Կրեդիտ բանկ», «Կոնվերս բանկ», «Հայէկոնոմ բանկ» ՓԲԸ-ներում եղած հաշվեհամարների վրա՝ 19.395.284 դրամ գումարի չափով:

Ընկերության կողմից 27.07.2015թ. ՀՀ վարչական դատարան է ներկայացվել Ակտի վիճարկման հայց: ՀՀ վարչական դատարանը 30.07.2015թ. որոշմամբ հայցադիմումն ընդունել է վարույթ:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի համաձայն. «1. Վիճարկման հայցի վարույթ ընդունելը կասեցնում է վիճարկվող վարչական ակտի կատարումը մինչև այդ գործով ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:...»

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Վարչական բողոք բերելը կասեցնում է բողոքարկվող վարչական ակտի կատարումը»:

Վերը մատնանշված փաստական տվյալների և դրանց հանդեպ կիրառելի իրավանորմների վկայակոչումներով ՀՀ ՖՆ Նոր Նորքի հարկային տեսչությունը գործել է ոչ իրավաչափորեն, կայացրել է օրենքի խախտումներով ընդունված որոշումներ, որոնցով խախտել է Ընկերության սահմանադրությամբ և օրենքներով երաշխավորված ազատ տնտեսական գործունեություն իրականացնելու և եկամուտ ստանալու նպատակով իր սեփական միջոցները տնօրինելու իրավունքները:

Ընկերությունը խնդրում է օրենքով սահմանված կարգով ձեռնարկել միջոցներ իր նկատմամբ կիրառված արգելանքները վերացնելու և խախտված իրավունքները վերականգնելու ուղղությամբ:

### **ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ռաումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ համաձայն ՀՀ ֆինանսների նախարարի 21.04.2015 թ-ի թիվ 5011722 հանձնարարագրի «Ալվարդ Վարդանյան» ՍՊԸ-ում կատարվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների և հարկային մարմնի կողմից վերահսկվող ՀՀ օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Նոր Նորքի ՀՏ 16.07.2015 թ-ի թիվ 5011722 ակտը (այսուհետ նաև Ակտ), որով ավելացված արժեքի հարկի գծով լրացուցիչ գանձման է առաջադրվել ընդամենը 20.166.235 դրամ: Ակտը «Ալվարդ Վարդանյան» ՍՊԸ-ին է հանձնվել 21.07.2015թ.-ին, հետևապես ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով Ակտն ուժի մեջ է մտել դրա ընդունման մասին սահմանված կարգով ընկերությանն իրազեկելուն հաջորդող օրվանից, այն է՝ 22.07.2015թ.-ից:

Նշվեց նաև, որ ՀՀ ՖՆ Նոր Նորքի ՀՏ պետի կողմից 27.07.2015 թ-ին կայացվել է հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին թիվ 523 որոշումը, որով գանձման է առաջադրվել Ակտով արձանագրված պարտավորությունը:

Տվյալ դեպքում հարկ է նշել, որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն. «Հարկ վճարողները թաքցված կամ պակաս ցույց տրված հարկվող օբյեկտի համար հարկի գումարը, ինչպես նաև սույն օրենքի 13.13-րդ հոդվածի 1-ին

մասի, 23-27, 28.5 և 31 հոդվածների համաձայն հաշվարկված հարկային պարտավորությունները և սույն օրենքի 26-րդ հոդվածի երրորդ պարբերությամբ սահմանված վնասի հատուցման գումարները բյուջե են վճարում հարկային մարմնի կողմից համապատասխան ակտ ներկայացվելուց հետո՝ 10-օրյա ժամկետում»:

Իր հերթին, «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածի համաձայն. «Հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում հարկային մարմինը կամ տեղական ինքնակառավարման մարմինը որոշում է կայացնում հարկ վճարողից ժամանակին չվճարված գումարը գանձելու վերաբերյալ և այդ մասին պատշաճ ծանուցում վերջինիս»:

Ելնելով վերոգրյալ իրավանորմերի դրույթներից՝ Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1-րդ հոդվածով նախատեսված որոշումը կարող էր կայացվել, ինչպես նաև վերջինիս հիման վրա գույքի արգելադրման գործողությունները կարող էին իրականացվել, ընկերության կողմից Ակտով առաջադրված հարկային պարտավորությունների գծով գումարների վճարումը սահմանված ժամկետից ուշացնելու դեպքում:

Տվյալ դեպքում հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ակտն ուժի մեջ է մտել 22.07.2015թ-ից և ընկերությունն իրավունք է ունեցել մինչև 31.07.2015 թ-ը բյուջե վճարել Ակտով առաջադրված հարկային պարտավորությունները, այսինքն՝ հարկային պարտավորությունների գծով գումարների վճարման սահմանված ժամկետը լրացել է 31.07.2015 թ-ին, հետևապես 27.07.2015 թ-ին չէր կարող կայացվել հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու վերաբերյալ որոշում, ինչպես նաև՝ իրականացվել վերջինիցս բխող գույքի արգելադրման գործողություններ:


Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի դրույթներով, որի համաձայն անվավեր է առ ոչինչ չհանդիսացող այն ոչ իրավաչափ վարչական ակտը, որն ընդունվել է օրենքի խախտմամբ, այդ թվում՝ օրենքի սխալ կիրառման կամ սխալ մեկնաբանման հետևանքով, Հանձնաժողովը գտնում է, որ բողոքը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

**ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝**

Չեղյալ համարել ՀՀ ՖՆ Նոր Նորքի ՀՏ 29.07.2015թ.-ի հարկ վճարողի գույքի վրա արգելանք դնելու վերաբերյալ թիվ 030724 որոշումը:

**Հանձնաժողովի նախագահ՝**

  
**Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**

